ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 04.08.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/53

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, քննելով «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կարիքների համար գեոդեզիական գործիքների և gps-ռեֆերենց կայանի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից 09.07.2021թ. ներկայացված (19.07.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/53 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Ռեկոն» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 09.07.2021թ. ներկայացված բողոքով հայտնել է հետևյալը.

«*Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները*

Վերոնշյալ հարցման հայտարարության տեխնիկական բնութագրով պահանջվող պարամետրերի մասնագիտական ուսումնասիրությունը մեզ թույլ է տվել միանշանակ եզրակացնել, որ այն կազմված է սուբյեկտիվորեն՝ կոնկրետ արտադրողների կոնկրետ գործիքների պարամետրերին համապատասխան, և խոչընդոտներ է ստեղծում

մրցակցության համար՝ բացառելով ոլորտի մեկ այլ արտադրողի ներկայացուցչի կողմից առաջարկի ներկայացման հնարավորությունը:

Մասնավորապես, անդրադառնամ տեխ. բնութագրում առկա պահանջներին և դրանց վերաբերյալ մեր մեկնաբանություններին՝

Ապրանք 1՝ GPS-Ռեֆերենց կայան

Ալիքների քանակը՝ ոչ պակաս 624-ից

որպես պահանջ դրված է բավականին բարձր և համապատասխանում է այն գործիքի ալիքների քանակին, որի համար կազմված է տեխ բնութագիրը CHC i90 IMU-RTK: Այսինքն, դրված է այդ գործիքի մաքսիմալ ալիքների քանակը:

Հետմշակում ստատիկ ռեժիմում

Հորիզոնական - 2,5 մմ + 0,5 ppm կամ ավելի ճշգրիտ,

Այս պահանջը ևս դրված է վերոնշյալ գործիքի տեխ բնութագրից, որը, նախ բացառում է ՀՀ-ում ներկայացված մյուս բոլոր բրենդների հայտ ներկայացնելու հնարավարությունը. ընդ որում, կարող եմ նշել, որ ոլորտի համաշխարհային 3 առաջատար արտադրողներից (Trimble, Leica, Topcon) ոչ մեկը չունի այս պահանջներին և մի գործիք, բացի դա ոլորտում առկա չէ նման ճշտություն ունեցող 3 արտադրող ընկերություններ:

Ցանկանում եմ անդրադառնալ նաև այս մրցակցությունը բացառող պայմանի բովանդակային կողմին՝ ելնելով կարիքի բավարարման տեսակետից: Քաջատեղյակ լինելով ոլորտից, ինչպես նաև մեզ հասանելի եղանակով ուսումնասիրելով պատվիրատուի գործունեության ոլորտը և դրան համապատասխան պատվիրված գործիքների հնարավոր կիրառության բնագավառները, կարող եմ ասել, որ վերոնշյալ պահանջը մրցակցությանը խոչընդոտելուց բացի, հիմնավորված չէ նաև կարիքների բավարարելու տեսակետից, քանի որ վերոնշյալ պահանջը, որը՝ առաջին հերթին ավելի ճշգրիտ չափում, կարող է ապահովել իրականում ավելի բարձր ճշտություն, ապահովում է միայն 1 կմ-ոնց գծերի չափման դեպքում, որը պրակտիկայում շատ հազվադեպ է իրականացվում, իսկ հիմնականում չափումները իրականացվում է 5, 10, 20 և ավել կմ-անոց գծերով, որի դեպքում - 2,5 մմ + 1 ppm ցուցանիշը ավելի բարձր ճշտություն է ապահովում:

Фирма	Точность Точная статика В плане	Длина базовой линии			
		1 км	5 км	10 км	20 км
Trimble Leica Topcon	3 мм + 0,1 ppm	3.1 мм	3.5 мм	4 мм	5 мм
CHCNav	2,5 мм + 0,5 ppm	3.0 мм	5 мм	7.5 мм	12.5 мм

Այսպիսով, բացի մրցակցությունը խաթարելուց, վերոնշյալ պահանջը նաև բացասաբար է ազդում նաև ավելի որակյալ գործիք ձեռք բերելու հնարավորության վրա և, ինչպես նշեցի, բացառում է ոլորտի համաշխարհային առաջատար եռյակի գործիքներից որևէ մեկը սույն հայտով առաջարկելու հնարավորությունը:

Արտաքին անտենայի միացման հնարավորություն:

Հերթական մրցակցությունը բացառող և գնման մասով արդյունավետ թակարդ-պահանջ է:

Առաջին հերթին նշված արտաքին անտենայի միացման անհրաժեշտությունն է անհասկանալի, քանի որ նշված բնութագրերին համապատասխանող բոլոր ընդունիչները արդեն ունեն իրենց անտենաները. Երկրորդ՝ նշված անտենան բացառում է տեխ բնութագրով ներկայացված հաջորդ կարևոր պահանջի (Անկյան տակ չափումներ կատարելու հնարավորություն, IMU համակարգի առկայություն) կիրառությունը, քանի որ վերոնշյալ ֆունկցիան կարող է կատարվել միայն ներկառուցված անտենայի առկայության դեպքում: Հետևաբար այս պահանջը ավելորդ է և, բացի մրցակիցներին բացառելը, այլ գործառույթ չի իրականացնում: Եթե նույնիսկ դիտարկենք կիրառման այլ տարբերակներ, ապա այս դեպքում հարց է առաջանում՝ ինչու բոլոր պահանջված 8 գործիքների համար ենք այդ պահանջը դրել և ոչ թե 1 կամ երկու, քանի որ կոնկրետ անկյան տակ չափումներ կատարելու հնարավորության առկայության պահանջը ցանկացած գործիքի արժեքի վրա ազդող գործոն է, և եթե որոշ դեպերում չկա նման ֆունկցիայի անհրաժեշտություն, ապա այդ դեպքերում անհրաժեշտ է հանել այդ պահանջը և պատվիրատուի պահանջը, կարիքը բավարարել ավելի պակաս ծախսով:

Հրավերով պահանջվող երկրորդ ապրանքն է՝

Տախեոմետր

Նշված ապրանքի տեխ բնութագիրը ևս բացառում է ՀՀ-ում ներկայացված բրենդների մասնակցությունը, օրինակ. «Սնուցումը (մեկ լրիվ լիցքավորված մարտկոցով

աշխատանքի ժամանակը)՝ ոչ պակաս քան 20 ժամ » այս և «լիթիոնային մարտկոցներով պակաս, քան 11Վ, 5.6 Ամպեր ժամ,» պահանջները, որոնք հստակ չեն ազդում կարիքի բավարարման վրա, բացառում են մեր կողմից ներկայացվող ապրանքի մասնակցության հնարավորությունը:

Մասնավորապես, մեր դեպքում մեկ մարկտոցով գործիքը աշխատում է 19 ժամ, սակայն ունի 2 մարտկոցի տեղ և կարող է աշխատել 38 ժամ, հստակ կարող է բավարարել պատվիրատուի պահանջը, սակայն նշված «մեկ մարտկոցով աշխատելու» պահանջը բացառում է մեր մասնակցությունը:

Նշեմ նաև 38 ժամը ընդունված պրակտիկայում ավելի քան բավարար ժամանակ է գործիքի անընդհատ աշխատելու հնարավորության համար:

Բացի դա եթե պատվիրատուի հիմնական խնդիրը, կարիքը այն է, որ առանց վերալիցքավորման վայր վերադառնալու հնարավոր լինի երկար աշխատել, ապա հրավերով անհրաժեշտ էր սահմանալ նաև մարտկոցների քանակը: Ասվածը ևս մեկ անգամ խոսում է պոտենցիալ մրցակիցների բացառման և ոչ թե կարիքի բավարարման տեսանկյունով գրված հրավերի մասին:

Վերոնշյալ մեր հիմնավորումները ավելի են ամրապնդվում տեխ բնութագրով մեր կողմից դիտարկված երկու ապրանքի դեպքում էլ նշված հետևյալ պահանջի դիտարկման դեպքում՝ «Մատակարար կարող է հանդիսանալ տվյալ գնման առարկան արտադրող ընկերությունը կամ արտադրողը ընկերության պաշտոնական ներկայացուցիչը, ինչպես նաև տվյալ գնման առարկան արտադրող ընկերության կամ արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցչի կողմից գնման առարկայի վերաբերյալ տրված վաճառքի թույլտվություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը»:

Նշեմ, որ ՀՀ Կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-ն որոշման 21 հոդվածով սահմանված է, որ մատակարարից կարող է պահանջվել արտադրողի կամ վերջինիս ներկայացուցչի երաշխիքային համապատասխանության սերտեֆիկատ: Հետևաբար վերոնշյալ պահանջը չի համապատասխանում գործող կարգին և անհրաժեշտ է համապատասխանեցնել դրան: Մի կողմ դնելով պահանջի իրավական հիմնավորվածության մասը և դիտարկելով նշված պահանջը՝ մի կողմից հասկանում ենք, որ պատվիրատուն տրամաբանորեն ցանկանում է ապրանք ձեռք բերել այնպիսի մատակարարից, ով ՀՀ-ում հանդիսանում է ներկայացուցիչ և կարող է հետագայում պատշաճ սպասարկում իրականացնել: Տվյալ դեպքում արդեն մեր համար անհասկանալի

է պատվիրատուի կողմից այնպիսի պահանջների սահմանումը, որը բացառում է ՀՀ շուկայում ներկայացված բրենդների մասնակցությունը: Տվյալ պահանջի սահմանումը, ըստ մեզ, տրամաբանական էր իրականացնել շուկայի ուսումնասիրություն, որը չի արվել:

Հայտնում եմ նաև, որ արդեն ունեցել ենք 2 (Էկոկենտրոն ԳՀԱՊՁԲ-20/6, ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ- 21/138) առնչվելու խնդրո առարկա տեխ բնութագրի համանման տեխ բնութագրերի հետ, որից մեկը ԵՊՀ-ԳՀԱՊՁԲ-21/138 այս պահին քննման փուլում է:

Բողոքի պահանջը.

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1 և 2 կետերով, 50-րդ հոդվածի 7-րդ մասին 1-ին ենթակետով խնդրում եմ.

1. Պարտավորեցնել ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ -21/04 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ -21/04 ծածկագրով գնման ընթացակարգը»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.07.2021թ. ժամը 09:20-ին, 28.07.2021թ. ժամը 09:15-ին և 04.08.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 22.07.2021թ. ժամը 09:20-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքը:

2. <u>«Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները.</u>

«Քաղաքաշինություն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.08.2021թ. թիվ 20-140 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Քննարկման առարկա է հանդիսանում «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կողմից ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04 ծածկագրով գնանշման հարցման վերաբերյալ հրապարակված հայտարարությամբ ձեռքբերվող գեոդեզիական գործիքների՝ տախոմետրերի, դիսոմետր և GPS-ռեֆերենց կայանների ձեռքբերումը:

«Քաղաքաշինություն» ՓԲԸ-ն ընդունում է բողոքով բարձրացված տեխնիկական բնութագրով բոլոր կետերը և խնդրում ենք թույլ տալ կատարելու շտկումներ»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 22.07.2021թ. ժամը 09:20-ին, 28.07.2021թ. ժամը 09:15-ին և 04.08.2021թ. ժամը 09:17-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի

մասնակցությունը, ով հայտնել է, որ չի հանդիսանում ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04 ծածկագրով ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչ, և քանի որ բողոքով բարձրացված հարցերը վերաբերում են ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04 ընթացակարգով ձեռքբերվող ապրանքների տեխնիկական բնութագրերին, ուստի չի կարող տալ պարզաբանումներ:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ԳԲՔԱ-ՆԳ-2021/53 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կարիքների համար գեոդեզիական գործիքների և gps-ռեֆերենց կայանի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. «Ռեկոն» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված գնման ենթակա ապրանքների՝ «GPS/ ռեֆերենց կայան/»-ի և «Տախեոմետր»-ի տեխնիկական բնութագրերի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու իրավաչափությունը:

3. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 1-ին և 2-րդ չափաբաժիններով սահմանվել են գնման ենթակա ապրանքների՝ «GPS/ ռեֆերենց կայան/»-ի և «Տախեոմետր»-ի տեխնիկական բնութագրերը (հետայսու՝ Տեխնիկական բնութագիր):

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Ռեկոն» ՍՊԸ-ի 09.07.2021թ. բողոքը՝ կից փաստաթղթերով, ««Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի 02.08.2021թ. թիվ 20-140 դիրքորոշումը՝ կից

փաստաթղթերով, Ընթացակարգի հրավերը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպես, «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կարիքների համար գեոդեզիական գործիքների և gps-ռեֆերենց կայանի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված գնման ենթակա ապրանքների՝ «GPS/ ռեֆերենց կայան/»-ի և «Տախեոմետր»-ի համար սահմանվել են հետևյալ տեխնիկական բնութագրերը.

Հ/Հ	անվանումը	Տեխնիկական բնութագիր
1	GPS- Ռեֆերենց կայան	Տեղորոշման համակարգ Ալիքների քանակը՝ ոչ պակաս 624-ից, GPS՝ L1, L2, L5 կամավել , GLONASS՝ L1, L2 կամավել, Galileo՝ E1, E5a, E5b կամավել, BeiDou՝ B1, B2, B3 կամավել, SBAS՝ L1 կամավել, QZSS՝ L1, L2, L5 կամավել, Չափումների ճշտությունները Ներկա ժամանակում կինեմատիկ (RTK) չափումներ՝ Հորիզոնական - 8 մմ + 1ppm կամավելի ճշգրիտ, ՈՒղղահայաց – 15 մմ + 1 ppm կամ ավելի ճշգրիտ, Չափումների հուսալիությունը՝ 99.9 % կամ ավել, Հետ մշակում կինեմատիկ ռեժիմում Հորիզոնական – 3 մմ + 1ppm կամ ավելի ճշգրիտ, ՈՒղղահայաց – 5 մմ + 1 ppm կամ ավելի ճշգրիտ, Հետմշակում ստատիկ ռեժիմում Հորիզոնական – 2,5 մմ + 0,5 ppm կամ ավելի ճշգրիտ,

		ՈՒղղահայաց – 5 մմ + 0,5 ppm կամ ավելի ճշգրիտ, Անկյան տակ չափումներ կատարելու հնարավորություն ,IMU համակարգի առկայություն , RTK ռեժիմում թեքության կոմպենսատորի ճշտությունը՝ 10 մմ +0.7 մմ / °կամ ավելի ճշգրիտ, Աշխատանքային ջերմաստիճանային տիրույթ՝ -40 °C – ից մինչև +65 °C կամ ավել, Պահպանման ջերմաստիճանային տիրույթ՝ -40 °C – ից մինչև +85 °C կամ ավել , Փոշու և խոնավության դեմ պաշտպանվածությունը՝ ոչ պակաս IP67- ից, Ինտեգրված ռեդիոմոդեմի առկայություն (UHFradio) ,տիրույթ՝ 430 - 470 MHz կամ ավել, Ներքին հիշողություն՝ոչ պակաս քան 6ԳԲ, Սնուցումը՝Li-ion 7,4 Վ, 3,7 Ա/ժ կամ ավել, արտաքին սնուցման աղբյուրի միացման հնարավորություն, Արտաքին անտենայի միացման հնարավորություն: Wi-Fi և Bluetooth մոդուլների առկայություն Կառավարման վահանակ Օպերացիոն համակարգ՝Android TM 7.1 կամ ավելի բարձր, Պրոցեսոր՝ Octa-core 1.4GHz կամավելի բարձր, Օպերատիվ հիշողություն՝ոչ պակաս 2Գբ- ից, Ներքին հիշողություն՝ոչ պակաս16Գբ –ից, Հիշողության քարտի(micro SD) միացման հնարավորություն, Չափսը՝ոչ պակաս 5.5 ” , IPS սենսորային էկրան , Կետայնությունը՝ոչ պակաս քան 1280x720, Տեսախցիկի առկայություն՝ ոչ պակաս 8մեգապիկսելից, Լույսի (вспышка) առկայություն, Փոշու և խոնավության դեմ պաշտպանվածությունը՝ ոչպակաս IP67- ից Աշխատանքային ջերմաստիճանային տիրույթ՝ -30 °C – ից մինչև +60 °C կամ ավել, Պահպանման ջերմաստիճանային տիրույթ՝ -30 °C – ից մինչև +70 °C կամ ավել , Wi-Fi , Bluetooth, 4G modem մոդուլների առկայություն, Սնուցումը՝ Li-ion 8 Ա/ժ կամ ավել: Սարքը պետքէ համալրված լինի աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ադապտերներով և ակսեսուարներով. տելեսկոպիկ ձողով, ամրակներով, լիցքավորման սարքով, տեղափոխման համար նախատեսված ճամպրուկով, պետք է տրամադրվի նաև ծրագրային ապահովում արդեն ակտիվ (առանց հավելավճարների) հանութագրման, նշահարման, ճանապարհաշինարարական և այլ հաշվարկային ծրագրերով: Մատակարարը պետք է անցկացնի ուսուցուն: Սարքը պետք է հնարավորություն ունենա աշխատելուՀՀ-ում գործող ռեֆերենց կայանների ցանցի հետ և ՀՀԿադաստրի կոմիտեի կողմից ընդունվող կորդինատային համակարգում : Սարքի համար պետք է տրամադրվի երկու տարվա երաշխիք, ետերաշխիքային սպասարկում: Մատակարարկարող է հանդիսանալ տվյալ գնման առարկան արտադրող ընկերությունը կամ արտադրողը նկերության պաշտոնական ներկայացուցիչը, ինչպես նաև տվյալ գնման առարկան արտադրող ընկերության կամ արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցչի կողմից տվյալ գնման առարկայի վերաբերյալ տրված վաճառքի թույլտվություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:
2	Տախեոմետր	Սարքի տեսակը՝ **Էլեկտրոնային տախեոմետր** Անկյունային չափման ճշտությունը 5“ կամավելի ճշգրիտ Չափումները առանց անդրադարձիչի՝ 500 մ կամ ավել Չափման ճշտությունը առանցանդրադարձիչի 2 մմ+ 2 ppм կամ ավելի ճշգրիտ Չափման ճշտությունը անդրադարձիչով1.0 մմ + 1.5 ppm կամ ավելի ճշգրիտ Տվյալների պահպանումը և փոխանցումը՝ (USB տիպ A և mini B) Տվյալների պահպանումը և փոխանցումը (ներքին հիշողություն) ոչ պակաս քան 0,8 ԳԲ Տվյալների պահպանումը և փոխանցումը՝ RS232 արձանագրությունով Տվյալների պահպանումը և փոխանցումը (տվյալների պահպանման ֆորմատները DXF / XML / GSI կամավել

		Կեմպենսատորի սխալմունքը՝ոչավելքան 2″ Դիտախողովակ (խոշորացումը)՝ 30x Մնուցումը (մեկ լրիվ լիցքավորված մարտկոցով աշխատանքի ժամանակը)՝ ոչ պակաս քան 20 ժամ Չափագրական ծրագրերի առկայություն Էկրան ոչ պակաս քան 320 x 240 Պաշտպանվածության աստիճան՝ առնվազն IP66 Սարքը պետք է լինի նոր և չօգտագործված: Տախեոմետրը պիտի ունեն աառնվազն մեկ տարվա երաշխիք, ինչպես նաև ետերաշխիքային սպասարկում: Տախեոմետրը պետք է համալրված լինի համապատասխան փայտե եռոտանիով, անդրադարձիչով և ձողով, նաև տեղափոխման համարնախատեսված համապատասխան պայուսակով, վերալիցքավորվող լիթիոնային մարտկոցներով ո չպակաս քան 11Վ, 5.6 Ամպեր ժամ,, մարտկոցների համապատասխան լիցքավորիչով: Մատակարար կարող է հանդիսանալ տվյալ գնման առարկան արտադրող ընկերությունը կամ արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցիչը, ինչպես նաև տվյալ գնման առարկան արտադրող ընկերության կամ արտադրող ընկերության պաշտոնական ներկայացուցչի կողմից տվյալ գնման առարկայի վերաբերյալ տրված վաճառքի թույլտվություն ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձը:

«Ռեկոն» ՍՊԸ-ն ներկայացված բողոքով վիճարկում է Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված գնման ենթակա ապրանքների՝ «GPS/ ռեֆերենց կայան/»-ի և «Տախեոմետր»-ի տեխնիկական բնութագրերի գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու իրավաչափությունը, մասնավորապես «Ռեկոն» ՍՊԸ-ն գտնում է, որ Տեխնիկական բնութագիրը կազմված է CHC i90 IMU-RTK գործիքի համար և խոչընդոտներ է ստեղծում մրցակցության համար՝ բացառելով ոլորտի մեկ այլ արտադրողի ներկայացուցչի կողմից առաջարկի ներկայացման հնարավորությունը, այդ թվում նաև՝ ոլորտի համաշխարհային 3 առաջատար արտադրողների՝ Trimble, Leica, Topcon, որոնցից ոչ մեկը ըստ «Ռեկոն» ՍՊԸ-ի չի բավարարում Տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը ԳԲՔԱ-ՆԳ-2021/53 բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննության անհրաժեշտությամբ պայմանավորված 22.07.2021թ. թիվ ԲՔԱ-ԳՆ/1/11770-2021 գրությամբ դիմել է «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ին՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում է գտնվում «Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ գեոդեզիական գործիքների և gps-ռեֆերենց կայանի ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում 09.07.2020թ. ներկայացված բողոքը:

Հայտնում եմ, որ ԳԲՔԱ-ՆԳ-2021/53 բողոքի բազմակողմանի և օբյեկտիվ քննությամբ պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել Ձեր կողմից ապահովելու «ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցչի (գնման հայտը նախագծած անձի) ներկայությունը բողոքի քննության նպատակով 28.07.2021թ. ժամը 09:15-ին հրավիրված նիստին (հասցե՝ ք. Երևան, Մելիք-Ադամյան 1, 1-ին հարկ, 115 սենյակ)»:

Պատվիրատուն 28.07.2021թ. ժամը 09:15-ին բողոքի քննության նպատակով հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից նիստի ընթացքում բողոքով վիճարկվող Տեխնիկական բնութագրերի մասով բարձրաձայնված հարցերին չի կարող տալ պարզաբանումներ, քանի որ չի հանդիսանում «ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման ներկայացուցիչ, միևնույն ժամանակ հայտնել է, որ Պատվիրատուն պատասխանատու ստորաբաժանման հետ կքննարկի բողոքի վեճի առարկա հանդիսացող Տեխնիկական բնութագիրը գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխանելու իրավաչափությունը և կներկայացնի գրավոր դիրքորոշում:

Այնուհետև՝ «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ն բողոքի քննության շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.08.2021թ. թիվ 20-140 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Քննարկման առարկա է հանդիսանում «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կողմից «ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով գնանշման հարցման վերաբերյալ հրապարակված հայտարարությամբ ձեռքբերվող գեոդեզիական գործիքների՝ տախոմետրերի և GPS-ռեֆերենց կայանների ձեռքբերումը:

«Քաղաքաշինություն» ՓԲԸ-ն ընդունում է բողոքով բարձրացված տեխնիկական բնութագրով բոլոր կետերը և խնդրում ենք թույլ տալ կատարելու շտկումներ»:

Այսպիսով՝ ուսումնասիրելով 1-ին և 2-րդ չափաբաժիններով սահմանված գնման ենթակա ապրանքների՝ «GPS/ ռեֆերենց կայան/»-ի և «Տախեոմետր»-ի տեխնիկական բնութագրերը, բողոքաբերի հիմնավորումները և Պատվիրատուի դիրքորոշումը, հայտնում եմ հետևյալը.

Հաշվի առնելով գնման գործընթացի կարևորությունը, ինչպես նաև ոչ միայն պատվիրատուի, այլև նաև մասնակիցների «Գնումների մասին» ՀՀ օրենքով

երաշխավորված իրավունքներն ապահովելու անհրաժեշտությունը, օրենսդիրը սահմանել է գնման ընթացակարգը կազմակերպելու հստակ գործընթաց, նախատեսելով նաև գնման գործընթացի համար պատասխանատուներին, վերջիններիս գործառույթները և գնման գործընթացը կազմակերպելու պայմանները: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման նպատակն է պատվիրատուի հատուցմամբ վերջինիս կարիքների համար կոնկրետ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ուստի Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել են պարտադիր պահանջներ ուղղված գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանը: Մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Ընդ որում՝ տեխնիկական բնութագրի կազմման՝ Օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխանությունն ապահովելու նպատակով Կարգի 13-րդ կետը նախատեսել է, որ պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտի նախագծմանը մասնակցող անձը (անձինք) պետք է ունենա (ունենան) գնման առարկան բնութագրելու մասնագիտական կարողություն, ինչը որոշվում է՝ ելնելով գնման առարկայի տեսակից: Դրա հետ մեկտեղ Կարգի 22-րդ կետի սահմանում է, որ Գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝ բացառությամբ գնումը սույն կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված հիմքով կատարելու դեպքերի:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Ընդ որում՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք

համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը:

Վերոգրյալի հաշվառմամբ և սույն գործի փաստերի հիման վրա՝ արձանագրում եմ, որ տվյալ դեպքում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը չի կարող գնահատական տալ արդյոք Տեխնիկական բնութագիրը՝ գնման առարկաների մասով, հստակ ձևով արտացոլում է Պատվիրատուի այն կարիքը, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը,

ուստի գտնում եմ, որ տվյալ դեպքում Պատվիրատուն պետք է փաստի և ապացուցի, որ Տեխնիկական բնութագիրը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է առկա կարիքին, որը հանգեցնում է օգտավետ գնման, միևնույն ժամանակ չի հակասում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածների և Կարգի 22-րդ կետի պահանջներին:

Մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին չի ներկայացրել որևէ վերաբերելի ապացույց առ այն, որ Տեխնիկական բնութագիրը համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 22-րդ կետի դրույթներին, ինչպես նաև Տեխնիկական բնութագրում առկա չափորոշիչները չեն խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

Ավելին՝ **Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 02.08.2021թ. թիվ 20-140 գրությամբ փաստել է, որ «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ն ընդունում է բողոքով բարձրացված տեխնիկական բնութագրով բոլոր կետերը և խնդրել է թույլ տալ կատարելու շտկումներ»:**

Վերոգրյալի հաշվառմամբ, գտնում եմ, որ «Քաղաքաշինություն» ՓԲԸ-ի կողմից հայտարարված «ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պետք է հայտարարել չկայացած:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Ռեկոն» ՍՊԸ-ի կողմից 09.07.2021թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «ԵՔՔ-ԳՀԱՊՁԲ-21/04» ծածկագրով ընթացակարգի գնահատող

հանձնաժողովին չկայացած հայտարարելու Ընթացակարգը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**